

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

«23» մարտի 2015 թ.

N 35

ք. Ստեփանակերտ

Դատախազների և քննիչների ատեստավորում անցկացնելու հարցաշարը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և 28-րդ հոդվածով, հիմք ընդունելով ԼՂՀ դատախազության գործունեության փոփոխման, ինչպես նաև դատախազների և քննիչների ատեստավորում անցկացնելու հարցաշարի հստակեցման անհրաժեշտությունը, ի կատարումն ԼՂՀ գլխավոր դատախազի 2015 թվականի մարտի 23-ի «Դատախազների և քննիչների ատեստավորում անցկացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 33 հրամանով սահմանված կարգի 27-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 72-րդ և 73-րդ հոդվածների համաձայն,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒՄ ԵՄ

1. Հաստատել դատախազների և քննիչների ատեստավորում անցկացնելու հարցաշարը՝ նոր խմբագրությամբ: (Կցվում է)

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Գ.Ավագյանի վրա:

3. Ուժը կորցրած ճանաչել ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 23 առ 06.02.2009թ. «Դատախազների և քննիչների ատեստավորում անցկացնելու հարցաշարը հաստատելու մասին» հրամանը:

4. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին և ԼՂՀ քաղաքապետախազներին:

5. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական

Ա.Ա.Մոսիյան

ՀԱՐՑԱՇԱՐ

ԴԱՏԱԽԱՉՆԵՐԻ ԵՎ ՔՆՆԻՉՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

I. Սահմանադրական իրավունք

- 1) ԼՂՀ Սահմանադրության իրավաբանական ուժը և իրավական ակտերի ստորադասությունը:
- 2) Մարդու սահմանադրական իրավունքները:
- 3) Մարդու անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման հիմքերը:
- 4) Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի սահմանադրական բովանդակությունը:
- 5) Սեփականության իրավունքի և ձեռնարկատիրական գործունեության սահմանադրական հիմքերը և այն սահմանափակելու չափանիշները:
- 6) Իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանությունը:
- 7) ԼՂՀ Նախագահի սահմանադրական լիազորությունները և ընդունվող իրավական ակտերը:
- 8) ԼՂՀ Ազգային Ժողովի հիմնական գործառույթները և ընդունվող իրավական ակտերը:
- 9) ԼՂՀ կառավարության հիմնական գործառույթները և ընդհանուր իրավական ակտերը:
- 10) ԼՂՀ Գերագույն դատարանի լիազորությունները և ընդունվող ակտերը:
- 11) ԼՂՀ Սահմանադրության ընդունման և փոփոխման կարգը:
- 12) Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավական կարգավիճակը ԼՂՀ-ում:
- 13) Իրավական ակտերի տեսակները և ստորադասությունը:
- 14) Իրավական ակտն անվավեր և չեղյալ ճանաչելը:
- 15) Օրենսդրական տեխնիկայի կանոնները:
- 16) Օրենսդրական նախաձեռնություն:
- 17) Օրենքով սահմանված ԼՂՀ դրոշի, զինանշանի մանրամասն նկարագրությունը:

II. Դատախազության մասին իրավական ակտերը

- 1) Դատախազության սահմանադրական լիազորությունները:
- 2) Դատախազական ակտերը:
- 3) Դատախազների և քննիչների նշանակման և ազատման կարգն ու պայմանները:
- 4) Դատախազների և քննիչների իրավունքները և պարտականությունները:
- 5) Դատախազների և քննիչների նկատմամբ կիրառվող խախտուման և տույժի միջոցները:
- 6) Դատախազության աշխատակցի վարքագծի ընդհանուր սկզբունքները:

- 7) Գատախազության աշխատակցի վարքագծի կանոնները ծառայողական հարաբերություններում:
- 8) Գատախազության աշխատակցի վարքագծի կանոնները արտածառայողական հարաբերություններում:
- 9) Գատախազի և քննիչի երդումը:

III. Գատական իրավունք

- 1) ԼՂՀ դատական իշխանության մարմինների համակարգը:
- 2) Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի իրավասությունը և ընդունվող դատական ակտերի ուժի մեջ մտնելը:
- 3) Վերաքննիչ դատարանի իրավասությունը և ընդունվող դատական ակտերի ուժի մեջ մտնելը:
- 4) ԼՂՀ Գերագույն դատարանի իրավասությունը և ընդունվող դատական ակտերի ուժի մեջ մտնելը:
- 5) Գատավորի անկախությունը, ինքնուրույնությունը և անձեռնմխելիությունը:
- 6) Արդարադատության արդյունավետ իրականացման սկզբունքը:

IV. Քրեական դատավարություն (ընդհանուր մաս)

- 1) «Քրեական գործ», «գործով վարույթ», «մինչդատական վարույթ» հասկացությունների օրենսդրական բնորոշումները:
- 2) Գատավարական որոշումների հասկացությունը, տեսակները և դրանց ներկայացվող պահանջները: «Գատավարական որոշում», «որոշում», «վերջնական որոշում», «դատական ակտ» հասկացությունների փոխհարաբերությունը:
- 3) Դռնփակ դատական քննություն անցկացնելու հիմքերը:
- 4) Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը:
- 5) Մասնավոր մեղադրանքի գործերով գործի վարույթը կարճելու հիմքերը և դատավարական կարգի առանձնահատկությունները:
- 6) Գատախազի հայեցողությամբ քրեական հետապնդում չիրականացնելու հիմքերը և դատավարական կարգը:
- 7) Գատախազի լիազորությունները մինչդատական վարույթում:
- 8) Կասկածյալի և մեղադրյալի կարգավիճակ ձեռք բերելու կարգը:
- 9) Պաշտպանի պարտադիր մասնակցության հիմքերը:
- 10) Վկայի և ընթերակաների դատավարական կարգավիճակը: Ընթերականի բացարկման հիմքերը:
- 11) Գատախազի բացարկման հիմքերը:
- 12) Պաշտպանին գործի վարույթից հեռացնելու հիմքերը:
- 13) Քրեական դատավարությանը մասնակցող անձանց ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանության եղանակները մինչդատական վարույթում և դատարանում:
- 14) Քրեական դատավարությունում միջնորդությունների և պահանջների քննության կարգը:
- 15) Ապացույցների թույլատրելիության հասկացությունը և թույլատրելիության որոշման չափանիշները:
- 16) Ապացուցման առարկան և սահմանները:
- 17) Որոշակի ապացույցների առկայությամբ հաստատվող հանգամանքները:
- 18) Քրեական գործով վարույթն ավարտելիս իրեղեն ապացույցների մասին ընդունվող որոշումները:
- 19) Ձերբակալման, կալանավորման (որպես խափանման միջոցի) և կալանքի (որպես պատժի տեսակի) տարբերությունները:

- 20) Պետական, նոտարական և բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ ստանալու դատավարական կարգը:
- 21) Քրեական հետապնդման հասկացությունը:
- 22) Քրեական հետապնդման դադարեցումը:
- 23) Մեղադրանքի կողմը ԼՂՀ քրեական դատավարությունում:
- 24) Պաշտպանության կողմը ԼՂՀ քրեական դատավարությունում:
- 25) Ներկայացուցիչները և իրավահաջորդը ԼՂՀ քրեական դատավարությունում:
- 26) Քրեական դատավարությանը մասնակցող այլ անձիք:
- 27) Ապացույցների հասկացությունը, որպես ապացույց չթույլատրվող նյութերը:
- 28) Ապացույցների տեսակները:
- 29) Դատավարական հարկադրանքի միջոցների դասակարգումը:
- 30) Ձերբակալման բնորոշումը, կիրառման դատավարական կարգը:
- 31) Խափանման միջոցների տեսակները, կիրառման հիմքերը և դատավարական կարգը:

V. Քրեական դատավարություն (հատուկ մաս)

- 1) Քրեական գործ հարուցելու առիթներն ու հիմքերը:
- 2) Նախնական քննության ձևերը:
- 3) Որպես մեղադրյալ ներգրավելը, մեղադրանք առաջադրելու դատավարական կարգը:
- 4) Հարցաքննության և առերեսման դատավարական կարգը:
- 5) Չննում, արտաշիբհումն կատարելու հիմքերը և քննման դատավարական կարգը:
- 6) Ճանաչման ներկայացնելու դատավարական կարգը:
- 7) Խուզարկության և առգրավման դատավարական կարգը:
- 8) Փորձաքննություններ նշանակելու և կատարելու դատավարական կարգը:
- 9) Մեղադրական եզրակացության կառուցվածքը և բովանդակությունը:
- 10) Դատախազի մասնակցությունը դատական քննությանը:
- 11) Դատական վիճաբանությունների բովանդակությունը և կարգը:
- 12) Դատական ակտերի բողոքարկման կարգը:
- 13) Դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը:
- 14) Քննչական ենթակայություն:
- 15) Հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա ձերբակալման հիմքերը:
- 16) Քրեական հետապնդման մարմնի որոշման հիման վրա ձերբակալման հիմքերը:
- 17) Վկայի և տուժողի հարցաքննության դատավարական կարգը:
- 18) Կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության դատավարական կարգը:
- 19) Առերեսման հիմքերն ու դատավարական կարգը:
- 20) Վերաքննիչ դատարանում գործի քննության կարգը:
- 21) Խուզարկության և առգրավման մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:
- 22) Փորձաքննություն նշանակելու հիմքերը:
- 23) Լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունը:
- 24) Քրեական գործով վարույթի կասեցման հիմքերը:
- 25) Նախաքննության ընթացքում գործով վարույթի կարճման և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերն ու դատավարական կարգը:
- 26) Քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման բողոքարկումը:
- 27) Մեղադրական եզրակացությամբ ստացված գործով դատախազի կողմից լուծվող հարցերը:
- 28) Դատարանի որոշմամբ կատարվող քննչական գործողությունները:
- 29) Դատարանի որոշմամբ կիրառվող դատավարական հարկադրանքի միջոցները:
- 30) Քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին միջնորդությունների քննարկման կարգը:

- 31) Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների քննումը, դրանց վերաբերյալ դատական որոշման բողոքարկումը:
- 32) Առաջադրված մեղադրանքը դատական քննության ընթացքում լրացնելու կամ փոփոխելու կարգը:
- 33) Դատարանում ամբաստանյալի հարցաքննության կարգը:
- 34) Դատարանում վկայի և տուժողի հարցաքննության կարգը:
- 35) Վճռաբեկ բողոք բերելու հիմքերը:
- 36) Դատական քննության արագացված կարգի կիրառման հիմքերը:
- 37) Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի բողոքարկման կարգը:
- 38) Դատական ակտերի բողոքարկման ժամկետները՝ վճռաբեկության կարգով:

VI. Քրեական իրավունք (ընդհանուր մաս)

- 1) Հանցագործության հասկացությունը:
- 2) Հանցագործությունների դասակարգումը:
- 3) Մեղքի ձևերը:
- 4) Ավարտված և չավարտված հանցագործությունները:
- 5) Հանցակցության հասկացությունը:
- 6) Արարքի հանցավորությունը բացառող հանգամանքները:
- 7) Պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերը:
- 8) Քրեական պատասխանատվությունից ազատելու տեսակները, դրանց բնութագիրը:
- 9) Պատժից ազատելու հիմքերը և տեսակները:
- 10) Հանցագործության օբյեկտի ընդհանուր բնութագիրը:
- 11) Հանցագործության օբյեկտիվ կողմի ընդհանուր բնութագիրը:
- 12) Հանցագործության սուբյեկտիվ կողմի ընդհանուր բնութագիրը:
- 13) Հանցագործության սուբյեկտի ընդհանուր բնութագիրը:
- 14) Հանցափորձի և հանցագործության նախապատրաստության բնորոշումը:
- 15) Հանցակցության հսկողությունը, հանցակիցների տեսակները:
- 16) Անհրաժեշտ պաշտպանության հասկացությունը և իրավաչափության պայմանները:
- 17) Ծայրահեղ անհրաժեշտության հասկացությունը և իրավաչափության պայմանները:
- 18) Պատժի տեսակները, հիմնական և լրացուցիչ պատիժները:
- 19) Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները:
- 20) Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները:
- 21) Պատժի հասկացությունը և նպատակները:
- 22) Ազատազրկման հետ չկապված պատիժների բնորոշումը:
- 23) Ազատությունից զրկելու հետ կապված պատիժների բնորոշումը:
- 24) Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները:
- 25) Պատժի ժամկետները հաշվարկելը:
- 26) Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու նախապայմանները:
- 27) Պատիժը չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու նախապայմանները:
- 28) Համաներման և ներման բնութագիրը:
- 29) Դատվածության քրեաիրավական հետևանքները: Դատվածության մարման և հանման պայմանները:
- 30) Անչափահասների նկատմամբ նշանակվող պատժի տեսակների և դատարարակչական բնույթի հարկադրանքի միջոցների բնութագիրը:

VII. Քրեական իրավունք (հատուկ մաս)

- 1) Սպանության հասկացությունը, սպանության տեսակները:
- 2) Ինքնասպանության հասցնելու և ինքնասպանության հակելու սուբյեկտիվ կողմի

հատկանիշները:

- 3) Կյանքի և առողջության համար վտանգավոր և ոչ վտանգավոր բնության բնութագիրը:
- 4) Խոշտանգման օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշները (հետևանքները):
- 5) Մարդուն առևանգելու օբյեկտիվ կողմը:
- 6) Շահագործման ձևերը՝ ըստ ԼՂՀ քր.օր-ի 130-րդ հոդվածի:
- 7) Բռնաբարության օբյեկտիվ կողմը:
- 8) Հափշտակության հասկացությունը, տեսակները:
- 9) Խարդախության օբյեկտիվ կողմը:
- 10) Ապօրինի և կեղծ ձեռնարկատիրությունը:
- 11) Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու (փողերի լվացումը) քրեաիրավական բնութագիրը:
- 12) Պատանդ վերցնելու սուբյեկտիվ կողմը:
- 13) Բանդիտիզմի հանցակազմը:
- 14) Խուլիգանության սուբյեկտիվ կողմը:
- 15) Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշները:
- 16) Կաշառք ստանալու սուբյեկտները:
- 17) Կաշառք տվողին քրեական պատասխանատվությունից ազատելու պայմանները:
- 18) Իշխանությունը չարաշահելը, իշխանագանցությունը կամ իշխանության անգործության քրեաիրավական բնութագիրը:

VIII. ԼՂՀ քրեակատարողական իրավունք

- 1) Գատապարտյալի հիմնական իրավունքները:
- 2) Գատապարտյալի պարտականությունները:
- 3) Գատապարտյալի առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման կարգը:
- 4) Ազատությունից գրկելու հետ չկապված պատիժներ սահմանած դատավճիռների կատարման կարգը:
- 5) Հանրային աշխատանքներ սահմանած դատավճիռների կատարման կարգը, վերահսկողությունը դրա կատարման նկատմամբ և դատապարտյալի պատասխանատվությունը:
- 6) Ուղղիչ հիմնարկների տեսակները, դրանց տարբերությունը:
- 7) Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կիրառելու կարգը, այդ միջոցները փոփոխելու և դադարեցնելու հիմքերը:
- 8) Անչափահաս դատապարտյալի պատիժը կրելու առանձնահատկությունները:
- 9) Ձերբակալված կամ կալանավորված անձանց իրավունքները:
- 10) Կալանավորված անձանց նկատմամբ կիրառվող տույժի միջոցները:
- 11) Պատժախցում կալանավորված անձանց պահելու առանձնահատկությունները:
- 12) Ձերբակալված անձանց արգելանքից և կալանավորված անձանց կալանքից ազատելու կարգը:

IX. Քաղաքացիական իրավունք

- 1) Իրավաբանական անձի հասկացությունը և հատկանիշները:
- 2) Իրավաբանական անձանց տեսակները:
- 3) Պետական սեփականության իրավունքի հասկացությունը, ծագման և դադարման հիմքերը, պետական սեփականության իրավունքի օբյեկտները:
- 4) Հողի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքները:

- 5) Պետության սեփականությունը հանդիսացող հողամասերի օտարման կարգը: Պետության սեփականությունը հանդիսացող հողամասերն օգտագործման, վարձակալության տրամադրելու հիմքերն ու կարգը:
- 6) Այօրինի շինարարության և ինքնակամ կառույցի հասկացությունը, կարգավիճակը:
- 7) Սեփականության իրավունքի պաշտպանության քաղաքացիաիրավական եղանակները:
- 8) Գործարքի հասկացությունը, գործարքի տեսակները և ձևերը, գործարքի վավերության պայմանները:
- 9) Պարտավորության հասկացությունը, տեսակները և տարերը:
- 10) Պայմանագիրը փոփոխելը և լուծելը:
- 11) Քաղաքացիաիրավական պատասխանատվության տեսակները և հիմքերը:
- 12) Վնաս պատճառելու համար պատասխանատվության հիմքերը:
- 13) Անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորության հասկացությունը և տեսակները:

X. Քաղաքացիական դատավարության իրավունք

- 1) Քաղաքացիական դատավարության կողմերի հասկացությունը, նրանց դատավարական իրավունքները և պարտականությունները:
- 2) Երրորդ անձանց հասկացությունը:
- 3) Ապացույցների հասկացությունը և դասակարգումը: Ապացույցների տեսակները:
- 4) Հայցային վարույթի հասկացությունը և էությունը:
- 5) Հայցի հասկացությունը: Հայցի տարրերը և հայցի հարուցման իրավունքը:
- 6) Հայցային վաղեմություն:
- 7) Դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու վարույթ:
- 8) Նոր հանգամանքներով վճիռների և որոշումների վերանայման վարույթ:
- 9) Վերաքննիչ վարույթի ընդհանուր բնութագիրը և վերաքննիչ բողոքարկման իրավունքը: Վերաքննիչ բողոք բերելու կարգը:
- 10) Վճռաբեկ վարույթը, վճռաբեկ բողոքարկման իրավունքը: Վճռաբեկ բողոք բերելու կարգը:
- 11) Վճռաբեկ բողոք բերելու հիմքերը և բողոք բերելու իրավունք ունեցող անձինք:
- 12) Դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու հիմքերը և հայցի տեսակները:
- 13) Պետությանը պատճառված վնասը վերակազմելու ուղղությամբ մինչև հայց հարուցելը դատախազի կողմից ձեռնարկվող միջոցները:
- 14) Դատախազի կողմից քաղաքացիական և վարչական գործերով դատական ակտերի բողոքարկումը վերաքննության և վճռաբեկության կարգով:

XI. ԼՂՀ վարչական դատավարության օրենսգիրք

- 1) Վարչական դատարան դիմելու իրավունքը:
- 2) Վարչական դատավարության մասնակիցները:
- 3) Գործ հարուցելու հիմքը և հայցի տեսակները:
- 4) Հայց ներկայացնելու ժամկետները և հայցադիմումին ներկայացվող պահանջները:
- 5) Հայցադիմումը վարույթ ընդունելը, հայցադիմումի ընդունումը մերժելը:
- 6) Հայցադիմումի պատասխան ներկայացնելու կարգը:
- 7) Ապացույցները վարչական դատավարությունում: Լրացուցիչ ապացույցների ընդունումը և հետագոտումը:
- 8) Վարչական դատարանի ակտերը, դրանց ուժի մեջ մտնելը և բողոքարկման կարգը:
- 9) Վարչական դատարանի բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերը,

դրանց դեմ բողոք բերելու իրավունքը և ժամկետները:

10) Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը, վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը:

11) Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթը:

12) Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի վարույթը: